

Հարց

Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ստանալու համար:

Պատասխան

Հանձնաժողովի 2008 թվականի ապրիլի 10-ի թիվ 20Ն որոշման համաձայն ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը, որոնք ներկայացվում են 2 օրինակից`

- ա) գործունեություն ծավալող ընկերության կանոնադրության եւ պետոբեզիստրի գրանցման վկայականի պատճենը (անձնագրային տվյալները, եթե Հայտատուն ֆիզիկական անձ է).
- բ) ջրօգտագործման թույլտվության պատճենը.
- գ) Թույլտվությամբ նախատեսվող գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ բնակավայրերի ցանկը եւ Ջրային համակարգի տեղակայման քարտեզը.
- դ) տեղեկանք մեկ այլ անձի սեփականության նկատմամբ սերվիտուտի անհրաժեշտության մասին կամ տեղեկանք դրա անհրաժեշտության բացակայության մասին: Այն դեպքում, երբ անհրաժեշտ է սերվիտուտ մեկ այլ անձի սեփականության նկատմամբ, պետք է ներկայացնել անհրաժեշտ սերվիտուտի բնույթի նկարագրությունը, նշել հնարավոր ազդեցության տակ ընկնող գույքի սեփականատիրոջ անունը, դիտարկվող գույքի տեղակայությունները, հայտատուի եւ այդ գույքի սեփականատիրոջ միջեւ կնքված պայմանագիր` անհրաժեշտ սերվիտուտի տրամադրման մասին.
- ե) Թույլտվությամբ նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ հողի եւ այլ գույքի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթեր (վարձակալության պայմանագրեր, պետական գրանցման վկայականներ).
- զ) տեղեկություններ Ջրային համակարգի օգտագործման ու կառավարման նախկին փորձի մասին (ներառում է Ջրային համակարգի օգտագործման ժամկետը` վերջին 5 տարիների ընթացքում, տարածքը, գործունեության տեսակը, գործունեության արդյունավետությունը).
- է) տեղեկություններ ջրային ռեսուրսների որակի կամ քանակի վրա Հայտով պահանջվող Ջրային համակարգի օգտագործման եւ կառավարման վնասակար ազդեցության մասին (հրապարակումներ մամուլում կամ այլ տեղեկատվություն).
- ը) Թույլտվությամբ նախատեսված գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ հիմնական եւ վարձակալված միջոցների ցանկը(հավելվածներ 3, 4).
- թ) գործարար ծրագիր.
- ժ) ընկերության վերջին տարվա ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվությունները (առկայության դեպքում նաեւ վերջին տարվա ընթացքում ընկերությունում անցկացված աուդիտորական եզրակացության եւ այլ մարմինների կողմից կատարված ստուգման ակտերի պատճենները).
- ժա) տեղեկություն վարկերի կամ այլ փոխառությունների մասին(հավելված 5).
- ժբ) պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթ.
- ժգ) Հայտատուին վերաբերող դատական վարույթում գտնվող եւ ավարտված գործերի կամ դրանց բացակայության մասին տեղեկություն (օրինական ուժի մեջ մտած վճիռներ, որոշումներ, կատարողական վարույթի որոշումներ):

(Ա.Գևորգյան)